122. ՇԱԲՈ ԵՎ ՇԱՀԱԲԱԳ

Ժամանակով ըլըմ ա, չի ըլըմ մի թաքավոր, ըտրան ունենըմ ա էրկու հատ տղա, մնի անունը՝ Շաբո, մնի անունն էլ՝ Շահաբագ։ Դրանց մի հատ բաղ են ունենըմ, էտ բաղի վրա մի հատ Բազե ղուշ ա բահամ գալի, էտ բաղի միջի անմահական խնձորները ամեն տարի քաշըմ տանըմ ա։ Մի տարի թաքավորի մենձ տղեն՝ Շաբոն հորը խնդրավ, թե.— Թող ես էթամ բաղը պահեմ, բալքի էտ անիրավի ձեռքիցը ազատենք։

Հերն ասեց.— Ա՛յ որդի, ունեմ-չունեմ էրկու որդի, գնաս՝ էտ անիծած Բազեն կվերունի կհանի երկնքի օիտը ղաթը կքցի, կտոլներդ չի էրևա, մեղք եմ։

Տղեն էլի աղաչում ա, հերն ասում ա.— Դե մեղքը քու շլինքը, էթում ես՝ գնա, համա քեզ զգուշ պահա։

Շաբոն վեր ա կենում, թուրը վերցնում ա, էթում ա բաղը. մութն ընկնում ա, էտ Շաբոն շատ ա ման գալի։ Քշերվա կեսն անց քունը տանում ա, էթում ա մի ծառի տակ նստում ա, քնում։ Էտ անիրավ Բազեն քշերվա կեսին գալում ա, էտ անմահական խնձորները հավաքում ա, տանում։

Առավոտը որ լիսը բացվում ա՝ թաքավորի տղեն վեր ա կենում տենում ա, ի՞նչ տեսնի, բաղի պատը քանդած, ծառի ճղերը կըտրտված, զատ չկա։ Թողնում ա, փոր ու փոշման էթում ա իրան հոր կուշտը։

Մնում ա մյուս տարին, պուճուր ախպերն ա ասում.— Շահաբազ թագավորն ապրած կենա, թող էս տարի էլ ես էրթամ բաղը պահեմ։

Թաքավորը վեր ա ունում, ասում.— Ա՛յ որդի, մենձ ախպոտրիցդ ինչ բարերերութին տեհա, որ քեզնից ինչ տենամ, կեթաս, կը վնասվես։

Էլի կրկնում ա.—Չէ՛, թաքավորն ապրած կենա, թող ես էթամ։

Հերը ասում ա.— Մեղքը քու շլինքը, որ էթում ես՝ քեզ զգուշ զահա։

Տղեն վերցնում ա հոր թուրը, էթում ա բաղը։ Շատ ա անց կենում, քիչ ա անցկենում, քշերվա կեսին տղի քունը տանում ա, բռնում ա ճկութը կտրում ա, աղ անում վրեն ու կապում։ Մրմռում ա, էս հետ գնում ա բաղի էն գլուխը, կալիս ա էս գլուխը։ Մին էլ տեսնում ա հես ա էտ անիրավ Բազեն թափին էկավ ու վեր էկավ ծառի վրա։ Շահաբազը ըտեղ զարմանում ա, մեկ էլ ուշքի ա գալիս, թուրը քցում ա՝ էտ անիրավ Բազեի ոտը կըտրում ա։ Բազեն թռչում ա էթում ա։ Շահաբազը մատի կապը ետ ա անում, լվանում ա, ուրիշ շոր ա կապում, ցավը պակասում ա, հանգըստանում ա։

Առավոտը վեր ա կենում, սինու մեջը գնում ա անմահական խնձորները տանում ա հորը։

Վեց անգամ գլուխ ա տալի, վրա յոթին հերն ասում ա.—Համեցեք, արի նեքսև։

Տանում ա գնում հոր առաջը էտ անմահական խնձորները։

— Է՛,— ասում ա. հերը,— Շահաբազ ջան, իմ թաքավորությունը գու տարար, զորանա՛ս։

Էտ օրը մնում ա, էքսը Շահաբազը վերակենում, իմանում ա իրանց հարևանից, որ իրանց քաղաքումը մի պառավ կա, որը իմանում ա էտ ղշի տեղը։ Էտ պառավը սեյրըբազ ա ըլում, ձրձում հեծնող։ Ասում են, որ նա էտ Բազեին մի ախչիկ ա տվե տարե։ Էտ օրն էլ անց ա կենում, առավոտը լիսը բացվում ա, Շահբազը էթում ա էտ պառավի կուշտը, ասում ա.— Նանի ջա՛ն, բարի լուս քեզ։

— Բա՛րև, հազար բարի էկար, նանին քեզ ղուրբան։

— Է՛,— ասում ա,— նանի ջա՛ն, ես իմացել եմ, որ էտ անիրավ Բազեի տեղը գու գիդաս, ինձ ասա, ես պիտի էթամ ընտրա կուշտը, գործ ունեմ։

— Դե որ ըտենց ա,— ասում ա,— թաքավորի տղա՛, ես գիդում եմ ընչի համար ես էթում. որ ընտրա հետ կռիվ կանեք,

ընտրա լեզվի տակը մի հատ մատանիք կա, բան ա որ հաղթեցիր ընտրան, լեզուն կը կտրես ու կվերնես։ Ընտրա բմբլներից էլ իրեք հատ կըվերնես, կըպահես։

Շահաբազը վեր ա կենում առանց տունը դիպչելու, ընկնում ա ճամբա, էթում ա։

Շատ ա էթում, քիչ ա էթում, էթում ա տեսնում ա մի հատ բիձա նստած՝ էրկու կծիկ աղաքին, սպիտակը կծկում ա սևը թողնում ա։

— Է՛,— ասում ա,— բարի աչողում, բիձա ջան, էտ ի՞նչ ես անում։

Ասում ա.— Ա՛յ որդի, էս սևը որ կա՝ քշերն ա, սպիտակը որ կա՝ լիսն ա։

Ասում ա.— Բիձա ջան, սևը մի կծկի, լիսը թող՝ մի էթամ՝ ճամփես հասնեմ։

Ասում ա.— Ես չեմ կարա ժամանակից դուս գամ։

Նա՝ հա՛, սա՝ չէ՛։ Վերջը ետ Շահաբազը բիձին վեր ա ունում դնում գեդինը, ձեռ ու ոտը պարանով ղայիմ կապում, սևը կծկում, սպիտակը թողում ու շարունակում ա իրա ճանապարը։

Շատ ա էթում, քիչ ա էթում, էթում ա հասնում ա քաղաքի ղրաղը, տեսնում ա մի նախրչի տավար ա պահում։ Ասում ա.—Բարի աչողո՛ւմ, նախրչի ախպեր։

Ասում ա.— Բա՛րև, հազար բարին էկար, ախպեր ջա՛ն։

Ասում ա.— Ես լսել եմ, որ ձեր երկրումը Բազե անունավոր մի զուշ կա, ո՞ւրտեղ ա ապրում։

— Տո՛, ախպեր ջան, դու չես կարա ընտրա հետ գլուխ դնի.. միևնույն ա՝ էթաս, սաղ չես գա, լավ ա ետ դառնաս, ափսոս ես։

— Տո՛, ա՛յ նախրչի, դու ինձ ասա տեղը, քու բանը չի։

Նախրչին ասում ա.— Դու գիտաս, տեսնում ե՞ս էն Կարմիր սարը, էտ Կարմիր սարի քամակը մի մեշա կա, ընդեղ ա ապրում։

— Է՛,— ասում ա,— ազատություն, նախրչի ախպեր։

Նախրչին ասում ա.— Էթաս բարով, ախպեր ջա՛ն։

Շահաբազը քաղաքը չի մտնում, քաղաքի ղրաղովը անց ա կենում, բանցրանում ա էտ սարը։ Էթում ա տեսնում մի մենձ ծառ, էտ ծառի ղրաղները ճղկերքով մենձ բուն էր շինած։ Շահաբազը նիլնում ա ծառը, տեսնում ա ղուշին, զարզանդից պռոշը ճաքում ա։

Բազեն գլուխը բարձրացնում ա.— Հը՛,— ասում ա,— թաքավորի տղա, օձն իրա պորտով, ղուշն իրա թևով ըստեղ չի մտե, ղու ո՞նց ես մտե ըստեղ։ Իշի նստի են քարի վրեն, հրես ես գամ պատասխանդ տամ։

Շահաբազը իջավ ծառից, նստավ քարի վրա, էտ անիրավ Բազեն վեր էկավ։— Է՜,— ասավ,— թաքավորի տղա, նպատակդ ի՞նչ ա, ասա տենամ։

— Նպատակս էն ա, որ էկել եմ լիզվիդ տակի մրտանին տանեմ։

— Ա՜յ քու սարվացնողի մեջքը կոտրվի, թե ես կեթամ քաղաք, էտ ձրձում հեձնոզ պառավին պրտի վերնեմ երկնքի օխտը զաթը, վե քցեմ, կտորը չէրևա։

— Է՜, թաքավորի տղա, դու իմ տան վրա ղոնաղ էս էկե, ես քեզ չեմ կանա վատ խոսք ասի, սրեն քունն ա, քցի տենանք թուրդ։

Շահարազը քաշեց թուրը, քցեց էտ անիրավ Բազեի վրա, էտ անիրավ Բազեն թռավ ու էն կողմը կայնավ։

— Է՜,— ասեց,— թաքավորի տղա, ոտերդ զայիմ հուպ տու գետնին, սրեն իմն ա։

Բազեն թուրը քաշեց, Շահաբազը են կողմը թռավ։ Թոզը որ շատ բանցրացավ՝ Բազեն Շահբազին չէր տեհե, էկավ էն տված տեղը, ասեց.— Հա՜յ գիդի հողածին, մի կտոր չմնաց, որ քցեի քերանս՝ սիրտս հովանար։

Շահաբազը են կողմիցը ձայն տվեց, թե.— Էտ ղդար մի պարծենա, ես ըստեղ սաղ եմ։

—Է՜,— ասեց,— թաքավորի տղա, հմի էլ սրեն քունն ա։

Ելի Շահաբազը թուրը քաշեց Բազեին, Բազեն թռավ էն կողմը կայնավ։

— Է՜,— ասեց,— թաքավորի տղա՜, սրեն իմն ա, մուղաթ կաց քեզ։

Բազեն թուրը քաշեց, Շահաբազը թռավ էն կողմը կայնավ։

— Հը՜,— ասեց,— թաքավորի տղա՜, սաղ ե՞ս։

Ասեց.— Հա՜, սաղ եմ, բա դու ի՞նչ ես, որ ես քեզնից վախենամ։

— Դե,— ասեց,— թաքավորի տղա՜, սրեն քունն ա, դու տուր։

Շահաբազը թուրը քաշեց, Բազեն թռավ էն կողմը կայնավ։

Բազեն վե կալավ ասեց.— Արի՜ գյուլաշ կըպնենք։

Ասեց.— Ես էլ եմ ուզում, կպնե՛նք։

Շահաբազն ու Բազեն հասան իրար հետ գյուլաշ կըպան։ Ջանք ճաշ իրար հետ գյուլաշ կըպան։ Եդի անքամը Շահաբազը ճչաց ու Բազեին տվեց գետինը։ Թուրը քաշեց, որ շլինքը կտրի, Բազեն դոշը բաց արեց։ Դոշը որ բաց արեց, Շահաբազը տեհավ, որ մի երիտասարդ տղա ա։— Վա՜յ, ասեց,— քու մեջքը կոտրվի, իմ ձեռը խի կոտրեցիր։

Ասեց.— Ինչդար էլ լավ ըլես, պտի ես քու գլուխը կտրեմ, չեմ թողա։

— Խի՞ ես կտրում, ա՛ռ մատանին, գնա՛։

— Չէ՛, մատանին էլ տաս, պտի վտրեմ։

Ասում ա.— Գի՞դաս իմ մատանու հունարը, որ սրբես՝ ինչ ուզես, կըստանաս։

— Ինչ էլ որ ըլնի, գլուխդ պտի էթա,— ասեց Շահաբազը,— թուրը քաշեց, Բազեի գլուխը կտրեց, մատանին հանեց լեզվի տակիցը, գրեց ծոցաչեքը, իրեք հատ էլ բմբուլ պոկեց, կոխեց արխալղի աստառի մեջը, գլուխն առավ գնաց։

Գնաց ճամփի կեսին ասեց. «Կաց հլա սրա հունարը փորձեմ, տեսնեմ ղո՞րթ ա»։ Հանեց մատանին, սրբեց, ասեց. «Քեզանից կուզեմ մի հատ կարմիր ձի»։ Էն րոպեին մի հատ կարմիր ձի, ֆրռռալով էկավ կայնավ Շահաբազի կողքը։ Շահաբազը վեկալավ թամքի վրի կարմիր չուխեն, հաքավ, թռավ ձիու վրա։ Ձին մի բոպեումը հասավ իրանց քաղքի ղրաղը։ Ըստեղ Շահաբազի միտքն ընկավ, որ են բիձի ձեռն ու ոտը կապել էր գետնին, ասեց. «Էթամ եդ անեմ, մեղք ա, իմ մուրազն առա»։

Քաշեց էկավ բիձի կուշտը, ձիուց իջավ, էտ բիձի ձեռ ու ոտքը բաց արեց։ Բիձին խընդրվավ.— Բիձա ջա՛ն, բիձա՛, ես քու հոքուն մեռնեմ, լիսը մի քիչ կամաց կտկա (կծկիր) մինչև էթամ հասնեմ քաղաք։

— Ա՛յ թաքավորի տղա, դու գնացիր քու մուրազը առար՝ էկար, էս պուճուր տեղը վախանո՞ւմ ես մթնից։

— Դե, բիձա ջա՛ն, ուզում եմ ժողովուրդը մի խելի ինձ տեսնան։

Շահաբազը էկավ հասավ իրանց տան կուշտը, հանեց կարմիր չուխեն, կապեց ձիու թամբի քամակը, գյամը քցեց ձիու գլուխը, ձին թռավ, գնաց։

Շահաբազը էկավ մտավ տունը, բարի փրիգուն ասեց թաքավորին, թաքավորը վեկալավ ասեց.— Շահաբա՛զ, էս քանի օր ա, դու ո՞րդե ես գնացե։ Ես թաքավոր եմ ըլե ըսդար վախտ, ինձ մեկը չի ասե, թե քու տղեքը յա լավ են, յա վատն են։ Մի գուցե մենք ժողով ենք անում, իմ թաքավորությունը հանձնում եմ քեզ։

— Ոչինչ,— ասում ա Շահաբազը, թաքավորն ապրած կենա. խնդրում եմ չնեղանաս։—Ասում ա, մատանիքը քսում, ասո՞ւմ ա. «Քեզնից կուզեմ մի ջուխտ ոսկե չուստ»։

Ոսկե չուստը բռանում ա։ Վեր ա ունում դնում հոր աղաքը։ Հերը տեսնում ա, ուրախանում ա։

Ասում ա.— Դե լավ, գնա՛, Շահարազ ջա՛ն։

Էտ օրը անց ա կենում, էքսը գալիս ա ձրձում հեծնող պառավի կուշտը, ասում ա.— Բարի լուս, նանի ջան։

Ասում ա.— Թաքավորի տղա բա՛րև, ասսու բարին էկաբ, բերե՞լ ես մատանին, հլա բռնա տենանք։

— Տո՛, այ նանի, ես ոնց կարեվ էտ մատանին բերե։

— Չէ՛,— ասում ա,— դու էտ մատանին բերել ես, խափում ես։

Մի քանի օր անց ա կենում, սինոդ-սինոդսկանները ժողով են անում, հոր թաքավորությունը հաստատում են Շահարազի վրա։ Ըտրանից մի էրկու օր անց ա կենում, էտ ձրձում հեծնող պառավը, էտ Շահարազենց հարևանին մի հատ կնիկ ա ըլում, էտ կնկանը ասում ա.— Տո՛ տունդ չքանդվի, ըտրան թաքավորությունը ի՞նչին ա պետք, ա՛յ ֆիլան քաղաքը, Նուրիջան թաքավորին մի հատ ընենց ախչիկ ունի, որ չուտես-չխմես՝ էրեսին մտիկ տաս, թող էթա էն ախչկան բերի։

Էտ կնիկը գալիս ա Շահարազին ասում ա, Շահարազը գնում ա ձրձում հեծնող պառավի մոտ.— Բարի լո՛ւս ասում ա,— նանի։

— Բա՛րև, ասսու բարին էկաբ, նանին քեզ մատաղ։

— Էտ ի՞նչ եմ լսե, էտ ի՞նչ ես ասե, հլա ասա տենամ։ Ետ ի՞նչ ախչիկ ա, որ ետ ղրդար գովել ես։

Պառավն ասում ա.— Ի՞նչու ա պետք քու թաքավորությունը, որ Նուրիջան թաքավորի ախչիկը քու կնիկը չի, թե որ տենաս Նրան, խելքդ կեթա։

— Է՛,— ասում ա,— նանի ջա՛ն, ինձ ծանոթ չունեմ, բարեկամ չունեմ, ո՞ւմ տունն էթամ, ո՞ւմից բան իմանամ։

— Տո գլխիդ, արևիդ մեռնեմ, իմ մոքոր ախչիկը ընդեղ ա, որ դու էթաս ընդեղ, նա ինչ որ ասի՝ դու անգամ կանես։

Թաքավորի տղեն վեր ա կենում, ընկնում ա ճանապարհ ու էթում ա էտ քաղաքի մեջը, էն վախտն էլ իրիգնապահ ա ըլում, նախրչին նախիրը որ բերելուս ա ըլում, քուչում հարցնում ա նախրչուն.— Նախրչի ախպե՛ր, էն պառավի տունը ո՞րդի ա, որ էրկու հատ էլ թազի ունի։

Ասում ա.— Ախպեր ջա՛ն, էս քուչովը ոըքի, կողքի դարքազն ա։

Էթում ա էտ պառավի տունը.— Բարաջողո՛ւմ, մարե։

— Վա՛յ, բա՛րև, հազար բարի, նանը քե մատաղ։

Ասում ա.— Մարե՛, ղոնաղ չե՞ս ընդունի։

Թե.— Ախի՞ չեմ ընդունի, ղոնաղը որ կա, ասսունն ա։

Շահաբազը մտնում ա նեքսև, նստում են, խոսում են։

— Է,— ասում ա,— նանի՛, էս Նուրիջան թաքավորի ախչիկը կարա՞ս ուզես ինձ։

Թե.— Տղա ջան, էտ ի՞նչ դժվար բան ա, որ ես էտ գործը չկատարեմ։ Համա ինչ ասեմ՝ դու պտի ինձ լսես։

Թե.— Կլսեմ, մարե ջան։

— Գիդո՞ւմ ես՝ ինչ կա, տղա ջան, անըմբդ ի՞նչ ա։

— Անըմբս Շահաբազ ա, մարե ջա՛ն։

— Շահաբազ ջա՛ն, էս էրկու թազին տենում ես, ես որ ինչ ըտրանց ասեմ, էն սրհաթը կանեն։ Էտ ախչկա տունը շատ բարձր հասար ունի, մարդ չի կարա մտնի, բայց էս իմ թազիքը կըթռնեն հասարը, կէթան, ախչկանը ինչ որ ասեմ՝ կասեն։ Մնա առա վոտը ես կըղըրկեմ ըտրանց, խաբար կը բերեն։

Էտ օրը մութն ընկնում ա, Շահաբազը պառկում ա, քնում ա, քշերվա կիսին զարթնում ա, հանկարծ տեսնում ա, որ մի վիշապ էս կողքին ա պառկած, մեկն էլ՝ էն կողմը։ Դու մի ասա, էտ պառավը որ կա սեյրըբաղ ա, իրա թազիները վիշապ ա դարձրել, ուզում ա Շահաբազին սրպանի։

Շահաբազը, որ տեսնում ա վիշապներին, Թազեի բմբուլը արխալուղի դոշիցը երևում ա, քաշըմ ա հանըմ, մեկը քցում ա էն մեկի կողքը, էն մեկը քցում ա էն մեկի առաչը. էտ ջուխտն էլ էտ ոոպեին սատկում են։

Առավոտը վեր են կենում, պառավը տեսնում ա, որ Շահաբազը սաղ ա, իսկ իրա թազիքը սատկել են։— Վա՛յ,— ասում ա,— ոչ բարին գայիր իմ տունը, դու իմ տունը խի՞ քանդեցիր։ Դու մեղավոր չես, իմ մոքոր ախչիկն ա մեղավոր։ Որ նա գիդար դու սեյրըբաղ իր, խի էր ղրգում իմ տունը։

Շահաբազը դուս ա գալիս ու գնում ա ըտրա տանից։ Հանկարծ մատանիքը միտն ա ընկնում։ «Տո՛, հազիր էս մատնիքը իմ ձեռն ա, ես խի եմ ընկե պառավներին խնդրում»։ Ըսպասում ա մութն ընկնի, հանըմ ա մատանիքը, քսում ա, ասում ա. «Մատանիք ջան, ուզում եմ քեզանից մի սև ձի, որ Նուրիջան թաքավորի հայաթը կայնացնի»։

Էն սհաթը սև ձին գալիս ա, սև չուխեն թարքին։ Շահաբազը սև չուխեն հագնում ա ու էթում ա թաքավորի ախչկա հայաթումը կաղնում ա հավուզի կողքը։ Չուխեն հանում ա Շահաբազը հագից, քցում ա ձիան թարքին, ձին թռնում ա ու էթում։ Թաքավորի ախչիկը մտնում ա օթախը, տեսնում ա, շատ շոք ա, էթում ա ա-

կուշկի մի դանադը բաց ա անում։ Հանկարծ տեսնում ա՝ հավուզի ջրի միջին՝ մի աղի շողք ջրի մեջ էրևում ա. «Հե՞յ դիդի,— ասում ա,— էս ի՞նչ բան ա»։ Էս կողմը, էն կողմը նայում ա, տեսնում ա, որ մարդ չկա, ասում ա. «Երևի երկնքի վրիցն ա շողք ընկնում»։

Շահաբազը, որ տեսնում ա թաքավորի ախչկանը, էն սհաթը ուշքն էթում ա, ընկնում ա գետինը։

Թաքավորի ախչիկը տենում ա ըտրան, ասում ա. «Հա՞յ դիդի, հողածին ա, ինձ որ տեհավ վերընկավ։ Ես պետկ ա գնամ տեսնեմ։ Ես ուխտ եմ արե, որ իմ հայաթը մարդ մտու հողածին՝ ես ընտրան պտի առնեմ»։

Թաքավորի ախչիկը իջնում ա, էթում ա Շահաբազի կուշտը. —Հը՞,— ասում ա,— ա՛յ երիտասարդ, ի՞նչ ա, աշխարհք չես տեսել։

Տեսնում ա, որ ուշկը չի գալիս գլուխը, խըտըտում ա, բերում ա օթախը։— Հը՞,— ասում ա, ա՛յ տղա զարթնի։

Տեսնում ա որ տղեն չի զարթնում, վազում ա դրբա վրի դինը, որ վռազ վազում ա, շըշկոում ա, կուժը ձեռիցը ընկնում ա ու ջարդվում։ Շահաբազը էտ կրի կոտրվելու ձենիցը զարթնում ա. հանկարծ որ մեկ էլ թաքավորի ախչկանը տեսնում ա՝ նորից էլի ուշն էթում ա։ Ախչիկը վաղում ա շուր ա բերում, լցնում ա Շահաբազի գլխին։ Ճակատը տրորում ա՝ Շահաբազը զարթնում ա։— Հը՞,— ասում ա,— ա՛յ աղա աշխարք չե՞ս տեհե։ Երևի դու էլ մի թաքավորի տղա ես, անմըղ ի՞նչ ա։

— Շահաբազ, քեզ հրաման։

— Է՞,— ասում ա,— Շահաբազ, ի՞նչ նպատակով ես էկե իմ հայաթը։

— Որ գուզն ասեմ, քու համար եմ էկե։

— Դե որ ըտենց ա, Շահաբա՛զ, որ էկել ես ինձ համար՝ քու շլինքին մեկ մեղք եմ դնում։ Էթաս մեր քաղաքը, մի անիրավ Բազե ղուշ ա ապրում, ընտրա լիզվի տակը մի մատանիք կա, եթե էն մատանիքը բերեցիր՝ քեզ կառնեմ, եթե չբերեցիր՝ չեմ առնի։

— Շատ լա՛վ,— ասում ա,— թաքավորի ախչիկ, էտ մատանիքը կշտիս ա։

— Մատանիքը որ քու վշտին ա, մեր քաղաքը մի սեյրըբազ ձրձում հեծնող մի պառավ կա, էտ պառավին պըտի սրպանես։

Ասում ա.— Ըտրա թաղիքը սրպանել եմ, մնում ա պառավը, պառավին էլ մի սիլա կըտամ, կվերընգնի կմեռնի։ Բայց,— ասում ա,— թաքավորի ախչիկ, ինձ մի տաս օր ժամանակ տուր, բիրադի ըստոնք կատարեմ։

— Լա՛վ,— ասում ա, թաքավորի ախչիկը,— տասը օր քեզ բավ։

Շահաբազը մնաս բարով ա ասում, դուս ա գալի հայաթը, մատնիքը հանում ա, քսում ա, ասում ա. «Մատանիք ջան, քեզանից ուզում եմ մի կարմիր ձի»։ Կարմիր ձին էն սհաթը գալիս ա կայնում ա կուշտը։ Շահաբազը վերցնում ա կարմիր շուխեն՝ հագնում ա, հեծնում ա ձին, ձին թռնում ա։

Թաքավորի ախչիկը հանում ա գլուխը ակուշկիցը, ասում ա. «Աստվա՛ծ, սուրբ ես, սա հողածին չէր։ Մենք էլ ձիանք ունենք, բա խի չեն ըտենց թռնում»։

Շահաբազը քշում ա ձին, գնում ա իրենց քաղաքը, էթում ա քաղաքը վեր ա գալի, շուխեն կապում ա ձիու թամքը, գյամը քցում ա գլուխը, ձին թռնում ա էթում ա։

Առանց իրանց տունը դիպչելու, էթում ա դուզ էն սեյրըբազ պառավի տունը։

— Ահա՛,— ասում ա,— բաբաջողում, նանե։

— Բա՛րև, հազար բարին էկար, նանեն քեզ մատաղ,— ասում ա, հմա ծնկները սկսում են դողալ։

Պառավի ճիպոտը ընդեղ դրած ա ըլում, Շահաբազը վեր ա ունում։ Էտ պառավին մի հատ կատու ա ունենում, պառավը հրամայում ա էտ կատվին՝ դառնում ա կարիճ, հասնում ա Շահաբազի վրա։ Շահաբազը փախնում ա։ Մատանիքը հանում ա, քսում ա, ասում ա. «Քեզնից ուզում եմ պատրաստի հիսուն գազանոց ֆոր, պառավը միջին ըլի»։ Էն սհաթը տենում ա մի հատ ֆոր, պառավը միջին ձեն ա տալի։ Շահաբազը էթում ա ֆորի վրա կայնում ա, տեսնում ա պառավին, ասում ա.— Է՛, անիրավ պառավ սեյրըբազ, դու ինձ խափիր, զրգիր մոքուրիդ ախչկա կուշտը, որ վիշապները ուտե՛ն։

Պառավը ֆորի միջից հարցնում ա կատվին. «Դառնաք բոլորդ կարիճ, Շահաբազին կծեք»։

Շահաբազը տենում ա չորս կողմից կարիճները ուզում են իրան քրքրեն, մատանիքը հանում ա, քսում ա, ասում ա. «Քեզանից ուզում եմ ըսպիտակ ձին»։ Ձին գալիս ա, հենց որ Շահաբազը ուզում ա նստի ձին՝ մի կարիճ կպչում ա ոտի բթիցը։ Բազեի բմբուլը ընկնում ա տզի միտը, բմբուլը հանում ա ու քսում, էտ բոլոր կարիճները սատկում են։ Էտ պառավի սեյրըբազությունը կորչում ա։ Շահաբազը գալիս ա իրանց տուն, սպիտակ շուխեն քցում ա ձիու թամքի վրա, ձին թռնում ա, էթում։

Ասում ա. «Ես էտ պառավին չըպտի սպանեմ, ես պտի կրակ

տանեմ, լցնեմ վրեն, որ չանք լիս վառվի»։ Շահաբազը վեդրոն լիքը կրակ ա լցնում թունդրից, տանում ա լցնում պառավի վրա, կայնում ա կուշտը, անկաճ ա անում, տեսնում ա որ ձեն չկա։ «Հա՜յ գիդի էտ ձրձում հեծնողը փախել ա»։ Վեր ա կենում ըտեղան էթում ա, տեսնում ա՝ հեսա պառավը մազերը խրճրճած, ոտները բորիկ, մատների ծերերը արնոտ, ասում ա.— Բա՜րև, նանե։

Ասում ա.— Ի՞նչ բարև, ի՞նչ բան,— ասում ա,— թաքավորի տղա, իմ սեյրըբազությունը դու կտրեցիր. որ ըտենց ա, էտ ձեռիդ ճիպոտովը մի հատ գլխիս տուր, ինձ շինի մի հատ մենձ ագռավ, որ ամեն առավոտ ում պատի վրա կայնեմ, ղռամ՝ ամենքը մի քար քցեն, էս պատից էն պատը թրռնեմ։ Իմ աչքը էս քաղաքի վրից մի կտրի։

Թաքավորի տղեն վեր ա ունում ճիպոտը, տալիս ա պառավի գլխին, ասում ա.— Մի ագռավ դառնաս, քշեր-ցերեկ ինչ ուտես՝ չկշտանաս։

Պառավը ըլնում ա մի ագռավ, թռնում։ Շահաբազը ասում ա.— Դու, մոքորդ ախչիկը, Բազեն մեր աշխարքը քանդեցիք։

Շահաբազը թողնում ա էթում։ էթում ա իրանց տունը. լիսը բացվի ձեր վրա, բացվում ա ըտրա վրա։ Առավոտը վեր ա կենում, մատանիքը հանում ա, առանց իրան հորն ու մորը ասելու, քսում ա մատանիքին, ասում. «Քեզանից կուզեմ սև ձին, ըստեղ պատրաստ»։ Հագնում ա սև չուխեն, վեր ա ըլնում սև ձին։ Ձին թրռնում ա, էթում ա Նուրիջան թաքավորի քաղաքը, էթում ա Նուրիջան թաքավորի ամարաթը։ Հանում ա սև չուխեն, քցում ա ձիու թամքին, ձին թռնում ա, էթում ա։ էթում ա նստում ա ախչկա կուշտը։ Ախչիկը կանչում ա իրա հորը, սինոդ-սինոդականներին։ Ախչիկը հորն ասում ա.— էս տղեն ա՝ որ ինձ ուզում ա։

Բա,— ասում ա,— ա՜յ որդի, որ էտ տղեն քեզ ուզում ա, քու ասած պատվերները կատարե՞լ ա։

Շահաբազը ասում ա.— Հրաման քեզ, կատարել եմ։

— Ես ոնց հավատամ, որ կատարել ես։

Շահաբազը ասեց.— Ի՞նչ ես ուզում։

— Ես ուզում եմ՝ էս բոպեիս մի հատ կոթան թուխս՝ ութը հատ ճուտը քամակին, ոսկե սինում մեջը կոթկոտալով ման գան։

Շահաբազն ասեց.— Մի պուճուր գնացեք դուռը ըսպասեք, ես էսա բերել տամ։

Թաքավորը, սինոդ, սինոդականները դուրս էկան, Շահաբազը հանեց մատանիքը քսեց, ասեց. «Քեզանից ուզում եմ մի կոթան թուխս, ութը ճուտը քամակին, ոսկե սինու մեջը կոթ-

կրոթալով ման գանս։ էն բոպեին սինու մեջը բերին դրին Շահաբազի առաջը։ Շահաբազը կանչեց թաքավորին, սինոդ-սինոդականներին, թե.— էկե՛ք տեսեք։

էկան տեսան, թաքավորն ասեց.— Քեզ հալալ ա իմ ախչիկը։

Բերեցին նշանը վեդրին, կեր ու խում արեցին ու թողին գնացին թաքավորն ու սինոդ-սինոդականները։

Շահաբազն ու թաքավորի ախչիկը մնացին ըտեղ մենակ, շատ երկար խոսեցին, պառկեցան որ քնեն, Շահաբազը թուրը հանեց դրենց իրանց արանքը։ Թաքավորի ախչիկը ասեց Շահաբազին.— Ի՞նչու ես ըտենց անում, ես իմ պայմանից կը դառնամ։

Ասեց.— Թաքավորի ախչիկ, ինձ մուրազ ունեմ։

Ասեց.— Ես իմ պայմանից կդառնամ։

Ասեց.— Թաքավորի ախչիկ, աշխարք չե՞ս տեհե, իսան չես տեհե, մի քիչ ծանդր կաց։

Ախչիկը համոզվեց, քնեցին։

Լիսը բացվի մեր վրա, բացվեց ըտրանց վրա, վեկացան առավոտը, թաքավորը կանչել տվեց բոլոր դավլ-զուռնաչիքանց ու սկսեցին Շահաբազին ու թաքավորի ախչկանը ճամփա քցել։ Ընստան թաքավորի հասարակ ձիանքից ամեն մեկը ու ընկան ճամփա։

Էս պառավը, որ իմացավ որ Նուրիջան թաքավորի ախչիկը Շահաբազը տանում ա, վեկացավ գլուխը քանդեց, մազերը քըրքըրեց, մի ջուխտ հին չստեր քցեց ոտներն ու մի բաշ վաղեց գնաց Շահաբազի հոր փուշտը։ Գնաց թաքավորին վեց անգամ գլուխ տվեց, վրա յոթին կայնավ, ասեց.— Թաքավորն ապրած կենա, դու էս հիթսուն տարի թաքավոր ես ըլե, քու անընին այիբ չի էկե, քու տղեն գնացել ա Նուրիջան թաքավորի քաղաքից մի ղարաչի, ղանճղ աղջիկ առե գալիս ա։

Թաքավորը կանչեց իրան զորքը, հրամայեց, որ գնան Շահաբազին ու էտ ախչկանը սըպանեն։

Թաքավորը իրան թախտիցը վեր էր էկե, էտ իրավունքը չուներ նա աներ, զորքը էտ գիտեր, չուզեցին էլ՝ իսկական թաքավորին սըպանել։

Շահաբազը էկավ հասավ քաղաքը, մի հատ մարդ ղրկեց իրա հոր կուշտը, հերը վեկալավ գհոլ-զուռնեն ղրգեց տղի առաջը, ինքն էլ սինոդ-սինոդականի հետ գնաց։ Գնացին մոտիկացան, թաքավորը, որ հանկարծ հարսին տեհավ, հարսի սիրունությունիցը ուշաթափվավ։ Վազեցին ջուր լցրին թաքավորի վրա, թաքավորը զարթնեց, գնաց հարս ու տղի էրեսները համբուրեց, էկան տուն։

Սկսեցին կեր ու խումը։ Մութն ընկավ, բիրադի քաշվան, գնացին, Շահարազն սու ախչիկը վեկացան, քնան։ Շահարազը թուրը քաշեց դրեց էրկսի արանքը։ Թաքավորի ախչիկը ասեց.— Էը՛, գըլխիգ, արևիտ մեռնեմ, Շահարա՛զ, միտքդ ի՞նչ ա, ինձ ասես։

Ասեց.— Ինձ մուրազ ունեմ, մուրազս պտի կատարվի, նոր ես իմ թաքավորությունը կանեմ։

Առավոտը լիսը բացվի մեր վրա, բացվեցավ ըտրանց վրա։ Շահարազը ուզեց կարմիր ձին, նստավ, թռավ Նուրիշան թաքավորի քաղաքը, գնաց էտ պառավի տունը, ձիուցը իշավ, ձին թռավ գնաց։ Մտավ պառավի տունը, ասեց.— Բարաշողում, նանի՛։

Ասեց.— Բարև, աստու բարին, թաքավորի տղա՛։

Ասեց.— Ա՜խ, նանի, քեզ հոգի չկա. էսա ես քու ենանա կը խոսամ։ Նանի՛, դու ի՞նչ իր մտածում, որ գնացել իր իմ հորը էտ խոսկը ասել իր, բավական չէ ինչ էս երկիրը դուք քանդեք։

Շահարազը ճիպոտը հանեց, գնաց նանի կուշտը, որ էտ պառավը էտ ճիպոտը տեհավ, ասեց.— Էտ իմ մոքոր ախչկա ճիպոտն ա,— ասեց,— թաքավորի տղա, որ ինձ պտի շինես շինչանավաբ, ըտեղ էրկու հատ դըդում կա, որդի որ նեղ տեղն ընկնես, ըտոնք քեզ պետք կը գան, չես հավատո՞ւմ, գնա տես, ամենի վրա էս-դհար ծակ կա, ծակովը մտիկ տրա։ Էտ անպիտան պառավը ուզում էր Շահարազի գլուխը քալաք հանի, էտ դըդումների մեջ վիշապ կային, որ Շահարազը մոտենար, վիշապները կքաշեին նեքսև, կուտեին։

Շահարազն ասեց.— Ինձ հարկավոր չի։

Քաշեց ճիպոտը արխալուղի տակից, խփեց պառավի գլխին, ասեց. «Դու ըլես վիրունի խոզ, մի անկաճդ իսանի անկաճ մնա, որ ավ անողները տենան, իմանան՝ որ դու սեհրբազ պառավն ես»։ Դդումներից մեկին տվեց, ասեց. «Դու ըլես ասլան», էն մեկին էլ տվեց՝ ասեց. «Դու ըլես ղափլան։ Քշեր ցերեկ խոզի քամակից վազեք, չկարանաք հասնեք»։ Էն սհաթը պառավը դառավ վայրենի խոզ, դըդումները դառան ասլան-ղափլան, ընկան խոզի քամակից, հլա չուր ըսոր էլ վազըմ են, պառավին հանգիստ չեն տալիս։

Շահարազը հանեց մատանիքը, կանչեց սպիտակ ձին, նըստավ ու գնաց իրա քաղաքը։ Նորից սկսեցին ուտել-խմել, օխտը օր, օխտը քշեր դհոլ-զուռնով հարսանիք արեցին։ Ընտոնք հասան իրանց մուրազին, դուք էլ հասնեք ձեր մուրազին։ Երկնքից իրեք հատ խնձոր ընկավ՝ մեկը ասողին, էրկուսը՝ լսողին։